ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻՊ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ 2020-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՀԱՄԱԿԱՐԳԵԼՈՒ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան

«15» փետրվարի 2021թ.

Համակարգող խորհրդի նախագահի տեղակալ՝	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ տիկին Քրիստիննե Գրիգորյան

Համակարգող խորհրդի նիստի մասնակիցներ/անդամներ՝

Տաթևիկ Ստեփանյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ
Վաչե Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ
Արթուր Մարտիրոսյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ
Վլադիմիր Հովհաննիսյան	ՀՀ քննչական ծառայության պետի տեղակալ
Գևորգ Բաղդասարյան	ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ
Արսեն Այվազյան	ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ
Արա Ֆիդանյան	ՀՀ ոստիկանության պետի տեղակալ
Գևորգ Մարտիրոսյան	ՀՀ պաշտպանության նախարարության Մարդու իրավունքների և բարեվարքության կազմակերպման կենտրոնի պետ
Սյուզաննա Սողոմոնյան	ՀՀ ՊՆ Մարդու իրավունքների և բարեվարքության կազմակերպման կենտրոնի գլխավոր մասնագետ

Սիրանույշ Մելիքյան	ՀՀ Անվտանգության խորհրդի գրասենյակի Ժողովրդավարական ինստիտուտների բաժնի ավագ մասնագետ
Արամ Արամյան	ՀՀ ԱՆ միջազգային իրավական համագործակցության վարչության պետի տեղակալ
Աննա Կարապետյան	ՀՀ ԱՆ միջազգային իրավական համագործակցության վարչության արտաքին կապերի բաժնի գլխավոր մասնագետ
Իզաբելլա Սարգսյան	Եվրասիա համակգործակցության հիմնադրամ
Աննա Հովհաննիսյան	Կանանց ռեսուրսային կենտրոն
Տաթևիկ Խաչատրյան	Բաց հասարակության հիմնադրամներ
Արփի Հարությունյան	Բաց հասարակության հիմնադրամներ
Մարիամ Անտոնյան	Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
Էդգար Խաչատրյան	Խաղաղության երկխոսություն
Վիոլետտա Զոփունյան	Իրավունքի զարգացման կենտրոն

Համակարգող խորհրդի նիստը մեկնարկել է ՀՀ արդարադատության նախարարի, Համակարգող խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նախագահի տեղակալ Քրիստիննե Գրիգորյանի բացման խոսքով: Իր խոսքում նախարարի տեղակալն անդրադարձել է ՄԻՊ ազգային ռազմավարության և դրանից բխող 2020-2022թթ. ԳԾ-ով (այսուհետ՝ Ռազմավարական փաստաթղթեր) նախատեսված հաշվետվողականության մեխանիզմին, ներկայացրել հանդիպման օրակարգը, այնուհետ օրակարգի համաձայն՝ խոսքը փոխանցել է շահագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչներին ՝ հակիրճ ներկայացնելու 2020թ. երկրորդ կիսամյակում կատարման ենթակա միջոցառումների իրականացման վերաբերյալ հաշվետվությունները:

ՀՀ պաշտպանության, արդարադատության, աշխատանքի և սոցիալական հարցերի, ինչպես նաև կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների ներկայացուցիչները, համապատասխանաբար, ներկայացրել են 2020թ. երկրորդ կիսամյակի ընթացքում իրականացված աշխատանքները՝ մասնավորապես անդրադառնալով պատերազմի և COVID 19-ի հետևանքով չկատարված կամ մասամբ կատարված միջոցառումներին և դրանք 2021թ. ընթացքում իրականացնելու ծրագրերին:

Հաշվետվությունների ներկայացմանը հաջորդել է Խորհրդի կազմում ընդգրկված հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների խոսքը: Եվրասիա համագործակցության հիմնադրամի ներկայացուցիչ Իզաբելլա Սարգսյանը ողջունել է սույն ձևաչափով հանդիպումների անցկացումը և անդրադարձել ԳԾ-ի շրջանակներում իրականացված միջոցառումներին: Տիկին Սարգսյանը ԳԾ-ի 3-րդ կետով («ԶՈՒ-ում ամրապնդել հանդուրժողականության և փոխադարձ հարգանքի մթնոլորտը») նախատեսված միջոցառման իրականացման շրջանակներում նշել է, որ Եվրասիա համագործակցության հիմնադրամի կողմից իրականացվել է ոլորտային ուսումնասիրություն և այն կներկայացվի ՀՀ ՊՆ-ին՝ հետագա համագործակցության անկնալիքով: ՀԿ-ի ներկայացուցիչն անդրադարձել է նաև վերջիններիս կողմից ՀՀ-ում եզդիական համայնքի կրթության ապահովմանն առնչվող հետազոտությանը և առաջարկել ՀՀ ԿԳՄՍՆ-ի հետ համագործակցել այս ոլորտում: Արձագանքելով տիկին Սարգսյանի խոսքին՝ ՀՀ ԿԳՄՍՆ և ՊՆ ներկայացուցիչները վերահաստատել են իրենց պատրաստակամությունը:

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի ներկայացուցիչ Էդգար Խաչատրյանը ներկայացրել է ՄԻՊ ԳԾ-ի իրականացման վերաբերյալ վերջիններիս կողմից իրականացված մոնիթորինգային զեկույցի արդյունքները, ինչպես նաև հավելել, որ այժմ կազմակերպության կողմից իրականացվում է հետազոտություն ՄԻՊ ԳԾ-ում միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացված հանձնարարականների հասցեագրման վերաբերյալ, ինչը հնարավորություն կտա հստակեցնելու այս ոլորտում առկա ելակետային տվյալները: Պարոն Խաչատրյանը մատնանշել է նաև զինված

ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առկա որոշ հիմնախնդիրներ և շնորհակալություն հայտնել պետական գերատեսչություններին արդյունավետ համագործակցության համար:

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ներկայացուցիչ Մարիամ Անտոնյանը հանդես է եկել խոսքով, որի շրջանակներում անդրադարձել է միջոցառումների իրականացման հաշվետվություններում մատնանշվող կարգավիճակի չափորոշիչներին, ինչպես նաև խնդրել առավել մանրամասն տվյալներ ներկայացնել ԳԾ-ի 18.1 («Ստեղծել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմ») և 47-րդ («Ապահովել հոգեկան, այդ թվում՝ մտավոր խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունն իրենց իսկ վերաբերող բոլոր որոշումների կայացման գործընթացներում») միջոցառումների իրականացման վերաբերյալ: Արձագանքելով տիկին Անտոնյանի հարցադրումներին Արդարադատության նախարարի տեղակալը ներկայացրել է գործողությունների իրականացման կարգավիճակի մատնանշման/փոփոխության համար հիմք հանդիսացող չափորոշիչներին, իսկ Ոստիկանության պետի տեղակալ Արա Ֆիդանյանն ու Արդարադատության նախարարության ներկայացուցիչ Աննա Կարապետյանը ներկայացրել են կոնկրետ միջոցառումների իրականացման վերաբերյալ մանրամասները, որի արդյունքներով նախատեսվել է վերախմբագրել 47-րդ կետով նախատեսված միջոցառումը՝ շահագրգիռ մարմինների հետ քննարկմամբ նախատեսելով ոլորտային խնդրի համապարփակ կարգավորմանն ուղղված այլ գործողություններ:

Սույն քննարկմանն անդրադարձել է նաև Բաց հասարակության հիմնադրամների ներկայացուցիչ Տաթևիկ Խաչատրյանը, ով ևս նշել է հոգեկան առողջության հետ խնդիրներ ունեցող անձանց իրավական երաշխիքների ապահովման ոլորտում առկա խնդիրների առկայության մասին և համագործակցության պատրաստակամություն հայտնել:

Այնուհետ, օրակարգի համաձայն՝ տիկին Գրիգորյանը Խորհրդի հաստատմանն է ներկայացրել ՄԻՊ ԳԾ-ի իրականացման 2020թ. տարեկան հաշվետվությունը: Խորհրդի անդամներն ու հանդիպման մասնակիցները չեն ներկայացրել որևէ առարկություն և Հաշվետվությունը հաստատվել է:

Հաջորդիվ, Խորհրդի նախագահի տեղակալ տիկին Գրիգորյանն անդրադարձել է COVID-19-ով և պատերազմով պայմանավորված ԳԾ-ում համապատասխան փոփոխություններ կատարելու Արդարադատության նախարարության նախաձեռնությանը: Տիկին Գրիգորյանը նշել է, որ պայմանավորվածության համաձայն՝ Նախարարությունը ստացել և ամփոփել է հասարակական կազմակերպությունների և պետական գերատեսչությունների կողմից ներկայացված առաջարկությունները, որոնք մեծամասամբ տեղ են գտել նախագծում և փոփոխությունների նախագիծը նիստին ընդառաջ ներկայացվել է Խորհրդի անդամներին: Անդրադառնալով ՀՀ վարչապետի 2020թ. մարտի 2-ի թիվ 282-Ա որոշմամբ նախատեսված հաշվետվությունների ներկայացման ձևաչափին, նախարարի տեղակալն ընդգծել է, որ հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունները հաշվի առնելով՝ Արդարադատության նախարարությունը կմշակի հաշվետվությունների ներկայացման ձևաչափը սահմանող վարչապետի որոշման փոփոխության նախագիծը՝ ներառելով նաև հանրային կարծիքն արտացոլող տվյալները:

Ամփոփելով խոսքը, տիկին Գրիգորյանը խնդրել է Խորհրդի անդամներին համապատասխան փոփոխությունների վերաբերյալ իրենց դիրքորոշումները, այդ թվում այլ գործողություններ նախատեսելու վերաբերյալ առաջարկությունները հնարավորության դեպքում Խորհրդի քարտուղարությանը ներկայացնել մինչև մարտի 1-ը՝ ամփոփելու և ՀՀ վարչապետի աշխատազմ ներկայացնելու նպատակով:

Համակարգող խորհրդի նախագահի տեղակալ՝
Քրիստիննե Գրիգորյան
19.02.2021թ.